

4. Նոր տեխնոլոգիաների ներդրումը խրախուսելու նպատակով կիրառել մասնակցային մեխանիզմներ (ակտությունը 500 հազ. ԱՄՆ դոլարից ավել արժեք ունեցող տեխնոլոգիական սարքավորումների ծեռքբերման համար ցուցաբերում է իր մասնակցությունը սարքավորման արժեքի մինչև 30 %-ի չափով՝ դառնալով ներդրված միջոցներին համարժեք փայտեր, հետագայում փայտաժինն ընկերության կողմից հետ գնելու իրավունքով):
 5. «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում որոշակի ապրանքների (ալկոհոլային խմիչքներ, հատկապես՝ օլի, գարեջուր, պահածոներ, մասնավորապես՝ հյութեր, կաթի փոշի, սիգարետներ և այլն) համար սկսել տնտեսության լուրջ վնասի կամ վտանգի ուսումնասիրություն, և դրա արդյունքներից ենելով կիրառել ժամանակավոր պաշտպանական միջոցառումներ (գործող մաքսատուրքի դրույքաչափի բարձրացում, քանակական սահմանափակումներ):
 6. Արտահանումը խրախուսելու նպատակով՝
 - խրախուսման միջոցների կիրառում՝ հարկային արտոնությունների տրամադրման ձևով, օրինակ՝ որոշակի քանակի արտահանում ունենալու դեպքում շահութահարկի տոկոսադրույթի իջեցում.
 - դրամաշնորհների, մատչելի վարկերի և վարկային երաշխիքների տրամադրում.
 - պետական աջակցությամբ մարքեթինգային ծառայությունների տրամադրում:
 7. Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների կողմից հանրապետությունում շարտադրվող հումքի և օժանդակ նյութերի ներմուծման ժամանակ նաքսային սահմանում հաշվարկվող ԱԱՀ-ի վճարումները մինչև մթերման սեզոնի ավարտը հետաձգել և գանձումներն աստիճանաբար, պատրաստի արտադրանքի իրացմանը զուգահեռ իրականացնել: Այդ նպատակով համապատասխան փոփոխություններ կատարել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում:
- Մեր հաշվարկներով նշված միջոցառումների իրականացումը հնարավորություն կնճեռեն միջնաժամկետ հեռանկարում կարևորագույն պարենամթերքների ինքնարավության մակարդակը բարձրացնել 8-12 տոկոսով, գյուղատնտեսական ծագման արտադրանքների առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կրճատել շուրջ 2.4 անգամ: Ավելին, արտահանվող արտադրանքի կառուցվածքում գյուղատնտեսական ծագման արտադրատների մասնարաժինը կկազմի 22-23 տոկոս, 2007թ. 14.8 %-ի դիմաց:

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ
ԵրՊԿԱ ասպիրանտ

ՀՀ ԱՆԴԱՍՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՀԿ-ԻՆ ԵՎ ՆՐԱ ԱԶՌԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1992թ. Հայաստանը դիմել է Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրին (ՍԱԳՀ)՝ դիտորդի կարգավիճակ ստանալու համար: 1993թ. Վերջին ներկայացվել է ՀՀ դիմումը ՍԱԳՀ-ին անդամակցելու համար, որի հիման վրա 1993թ. դեկտեմբերի 17-ին ստեղծվել է Հայաստանի Հանրապետության անդամակցության Աշխատանքային խումբ: Ենելով այն հանգամանքից, որ 1995թ. ՍԱԳՀ-ն վերափոխվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), Հայաստանը վերահստատել է իր դիմումը՝ ԱՀԿ-ին անդամակցելու համար: 1996-2002թթ. տեղի են ունեցել ՀՀ ԱՀԿ-ին անդամակցության Աշխատանքային խմբի հինգ հանդիպումներ, 2002թ. նոյեմբերի 21-ին Աշխատանքային խումբը հավանություն տվեց Հայաստանի Հանրապե-

տուրքան ԱՀԿ անդամակցության Աշխատանքային խմբի գեկույցին: 2002թ. դեկտեմբերի 10-ին ԱՀԿ Գլխավոր խորհուրդը հաստատեց Հայաստանի անդամակցելու դիմումը, և 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանը պաշտոնապես դարձավ ԱՀԿ 145-րդ անդամը:

ՀՀ ԱՀԿ-ին անդամակցության գործընթացի շրջանակներում ԱՀԿ անդամ երկրների հետ ընթացող երկկողմ և բազմակողմ բանակցություններին զուգահեռ իրականացվել է ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող ողջ օրենսդրության համապատասխանեցում ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին: Իրականացվել են օրենսդրական համապարփակ բարեփոխումներ, լրամշակվել, փոփոխություններ են կատարվել գործող օրենսդրական դաշտում, ընդունվել են նի քանի տասնյակ օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր՝ ներդաշնակեցնելով ներքին օրենսդրությունը ԱՀԿ դրույթների հետ: Այդ բարեփոխումները ընդգրկել են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մաքսային և հարկային օրենսդրությունները, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, ստանդարտները և համապատասխանության հավաստումը, գյուղատնտեսությունը, ներքին շուկայի պաշտպանությունը, լիցենզավորումը, ապրանքների և ծառայությունների առևտրին առնչվող տարրեր ոլորտներ և այլն:


ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին և միջազգային նորմերին համապատասխան օրենսդրական փաստաթղթերի այդ փաթեթի ընդունումը նաև հիմք է հանդիսացել առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող սեփական օրենսդրական համակարգի հետագա գարգացման համար, ինչն իր հերթին իր ազդեցությունն ունեցավ Հայաստանի ընդհանուր տնտեսական գարգացման վրա:

ՀՀ կառավարության կողմից վարվող հետևողական և կայուն տնտեսական գարգացման քաղաքականությունը, ինչպես նաև ԱՀԿ անդամակցությամբ առևտրատնտեսական ընդհանուր կայուն դաշտի ձևավորումը և արտաքին անտեսական հարաբերությունների առավել ազատականացումը ամուր հիմք և նախապայման հանդիսացան կայուն տնտեսական գարգացման, օտարերկրյա և տեղական ներդրումների ծավալի աճի և համախառն ներքին արդյունքի կայուն աճի համար:

ԱՀԿ անդամակցության ազդեցությունը արտացոլվում է անդամակցությունից հետո ՀՆԱ-ի աճի բարձր տեմպերի վրա (2003թ.՝ 14.0%, 2004թ.՝ 10.5%, 2005թ.՝ 14.0%, 2006թ.՝ 13.4%, 2007թ.՝ 13.7%):

Ստորև ներկայացված է ՀՆԱ աճի դիմամիկան ըստ տարիների՝ 2000-2007թթ.¹

ՀՆԱ-ի աճը՝ 2000-2007թթ.



¹ www.armstat.am


Վերը բերված պատկերից ակնհայտորեն երևում է, որ 2003թ. ԱՀԿ անդամակցությունից հետո ՀՆԱ աճի տեմպերը եղել են բարձր՝ ի համեմատ նախքան անդամակցությունն ընկած ժամանակահատվածը, և, ինչը ոչ պակաս կարևոր է, ՀՆԱ տարեկան աճը կայունացել է: Նշված ցուցանիշների խթան, այլ հանգամանքների շարքում, եղել է նաև Հայաստանի անդամակցությունն ԱՀԿ-ին:

Ի լրումն տնտեսական աճի վրա ունեցած ազդեցությանը, Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին հնարավորություն ընծեռեց նաև ԱՀԿ անդամ երկրների հետ ամրապնդել երկկողմանի առևտրատնտեսական հարաբերությունները: ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ ազատական տնտեսության ամրապնդումը, ԱՀԿ «ազգերի առավել բարենպաստության» և «ազգային մոտեցման» ռեժիմների կիրառումը հնարավորություն տվեցին ինչպես մեծացնել հայկական ծագում ունեցող ապրանքների մուտքն ԱՀԿ անդամ երկրների շուկաներ, այնպես էլ նպաստեց ԱՀԿ անդամ երկրների ծագում ունեցող ապրանքների մուտքը հայկական շուկա, որն էլ ուղղակիորեն ազդեց ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների աճի ավելացման վրա:

Հայաստանի ԱՀԿ անդամակցությունից հետո տեղի ունեցավ ՀՀ արտաքին առևտրային հոսքերի աստիճանական վերակռումնորոշում, որի արդյունքում ոչ ԱՀԿ անդամ երկրների հետ նախկին կապերին զուգահեռ ձևավորվեցին որակապես նոր արտաքին տնտեսական ուղղություններ, աճեց առևտրաշրջանառությունը ԱՀԿ անդամ երկրների հետ: ԱՀԿ անդամակցությունը այս տեսակետից նպաստում է նաև արտաքին առևտրում վերոնշյալ նոր ուղղությունների ամրապնդմանը՝ ՀՀ հիմնական առևտրային գործընկերների համար կանխատեսելի և համահավասար առևտրային ռեժիմների սահմանման միջոցով:

Ստորև ներկայացված է ՀՀ առևտրաշրջանառությունը 1997-2007թթ. (ըստ ԱՀԿ անդամ և ոչ անդամ երկրների)¹.

Առևտրաշրջանառություն 1997-2007 թթ.



¹ www.mineconomy.am

ԱՀԿ-ին անդամակցությունից հետո ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառությունը 2007թ. անդամակցության տարվա համեմատությամբ աճել է մոտ 3 անգամ: Ածի այս միտումը հիմքեր ունի պահպանվելու նաև հաջորդ տարիների համար:

ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ծավալների մեծ աճ է գրանցվել ԱՀԿ անդամ երկրների հետ: Մասնավորապես, արտահանման ծավալում, անդամակցությունից հետո ԱՀԿ անդամ երկրներին բաժին է ընկնում ընդհանուր արտահանումների 2003թ.՝ 79%, 2004թ.՝ 76%, 2005թ.՝ 77%, 2006թ.՝ 82%, 2007թ.՝ 86%: Ներմուծման ծավալում անդամակցությունից հետո ԱՀԿ անդամ երկրներին բաժին է ընկնում ընդհանուր ներմուծումների 2003թ. 68%, 2004թ. 73%, 2005թ. 69%, 2006թ. 70%, 2007թ. 70%:

Արտահանման և ներմուծման ծավալների աճի միտումները ԱՀԿ անդամ երկրների հետ բացատրվում է ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ ազատական տնտեսության ամրապնդմամբ, ԱՀԿ համաձայնագրերի դրույթների, ԱՀԿ «ազգերի առավել բարենպատության» և «ազգային մուտքամաս» ուժիմների կիրառմամբ, որոնք ել առևտրային հարաբերությունները ՀՀ հիմնական առևտրային գործընկերների միջև դարձրել են ոչ խտրական և ավելի կայուն, վստահելի ու կանխատեսելի:


ԱՀԿ-ի անդամակցությունը դրականորեն անդրադարձավ նաև Հայաստանում ներդրումային միջավայրի ծնակորման վրա: Այսպես, ԱՀԿ-ի նկատմամբ պարտավորությունները ներառում են առևտրի և ներդրումների զգակի ազատականացումը, որն իր ազդեցությունը ունեցավ օտարերկրյա և տեղական ներդրումների հոսքերի վրա: Հայաստանը հանձն է առել ազատականացնել կարգավորող համակարգը արդյունաբերության մի շարք ճյուղերի համար, այդ բվում բիզնես ծառայություններ, հաղորդակցություն, կրթություն, ֆինանսական ծառայություններ, առողջապահական և սոցիալական ծառայություններ, օդային տրանսպորտի ծառայություններ:

ԱՀԿ-ին անդամակցությունը ոչ միայն ներգրավեց նոր ներդրողների, այլ նաև համատեղ ծեռնարկությունների օտարերկրյա գործընկերներին հնարավորություն տվեց ավելացնելու իրենց սեփական բաժնետոմսերն առկա մասնաճյուղերում: Ավելին, ժամանակի ընթացքում արտադրությանը անհրաժեշտ սարքավորումների ներմուծման ավելի ազատ հնարավորությունները կարող են օգնել բարելավել գնի համեմատ որակյալ արտադրանք ապահովող պայմաններ և մեծացնել տնտեսության գրավչությունը՝ որպես արդյունավետությանն ուղղված արտադրության ՕՈՒՆ-ների վայր: Իսկ, քանի որ ՕՈՒՆ-ների ուժիմը աստիճանաբար ազատականացվելու է, թե՛ ներհոսքը, թե՛ արտահոսքը, ամենայն հավանականությամբ, կհասնեն նոր և ավելի բարձր մակարդակի:

ԱՀԿ-ին անդամակցությունն Հայաստանի տնտեսությունն առավել գրավիչ դարձրեց օտարերկրյա ներդրողների համար: ԱՀԿ-ին անդամակցությամբ փաստվեց, որ Հայաստանում ծևակորվել է միջազգային շափանիշներին համապատասխանող տնտեսական օրենսդրություն, ինչպես նաև բարձրացվեց Հայաստանի առևտրատնտեսական քաղաքականության կանխատեսվածության և նրա նկատմամբ վստահության աստիճանը:

Ստորև ներկայացված են օտարերկրյա ներդրումները 2001-2007թթ. համար¹:

¹ www.mineconomy.am



ՀՀ տնտեսության իրական հատվածում իրականացվող օտարերկրյա ներդրումները 2007թ. անդամակցության տարվա հետ համեմատությամբ գրեթե քառապատկվել են, և այս դրական միտումը հիմքեր ունի պահպանվելու հաջորդ տարիների համար:

Գտնվելով առավել բաց և ազատական առևտրային ռեժիմ ունեցող ԱՀԿ անդամ երկրների խմբում, Հայաստանը ծեռք է բերել նաև բարձր վարկանիշ՝ որպես տնտեսական քաղաքականության տեսանկյունից առավել կանխատեսելի և նվազ ռիսկայնությամբ երկրի:

Խոսելով Հայաստանի տնտեսության վրա ԱՀԿ-ին անդամակցության ազդեցության մասին, կարևոր է դիտարկել նաև այդ պահից ի վեր ծառայությունների առևտրում տեղ գտած զարգացումներն ու միտումները: ԱՀԿ անդամակցության ԱՀԿ անդամակցությամբ ծառայությունների առևտրի ոլորտում ՀՀ կողմից ստանձնած և ՀՀ ծառայությունների ոլորտը բավականին ազատականացնող պարտավորությունները, որոնք ամրագրված են ծառայությունների առևտրի հատուկ պարտավորությունների ցանկի մեջ, խթան հանդիսացան Հայաստանում ծառայությունների ոլորտի դիմամիկ զարգացման համար:

Մասնավորապես, ԱՀԿ-ին անդամակցությունից հետո ՀՀ-ից արտահանվող ծառայությունների առևտուրը 2007թ. անդամակցության տարվա համեմատությամբ աճել է մոտ 2.8 անգամ¹: Իսկ ՀՀ ներմուծվող ծառայությունների առևտուրը 2007թ. անդամակցության տարվա համեմատությամբ աճել է մոտ 2.9 անգամ: Աճի այս միտումը հիմքեր ունի պահպանվելու նաև հաջորդ տարիների համար:

ՀՀ-ից արտահանվող ծառայությունները դոլարային արտահայտությամբ 2007թ. կազմել են 580.0 մլն ԱՄՆ դոլար 2003թ.-ի 207.4 մլն ԱՄՆ դոլարի դիմաց: ՀՀ ներմուծվող ծառայությունները դոլարային արտահայտությամբ 2007թ. կազմել են 792.6 մլն ԱՄՆ դոլար 2003թ.-ի 275.7 մլն. ԱՄՆ դոլարի դիմաց:

¹ www.unctad.org

Ծառայությունների մերմուծում դեպի Հայաստան (մլն ԱՄՆ Տ)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընդհանուր ծառայություններ	192.8	204.3	224.5	275.7	431.5	531.0	615.1	792.6

Ծառայությունների արտահանում Հայաստանից (մլն ԱՄՆ Տ)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընդհանուր ծառայություններ	136.9	186.5	183.8	207.4	332.6	411.1	484.7	580.0

Գոյություն ունեն նաև ԱՀԿ անդամակցության մի շարք դրական կողմեր, որոնց դժվար է ներկայացնել քանակական ցուցանիշներով, սակայն կարծում ենք, որ դրանք ոչ պակաս կարևոր դեր ունեն Հայաստանի տնտեսական զարգացման և Հայաստանի միջազգային վարկանիշի ամրապնդման տեսանկյունից: Նման գործոններից մեկն այն է, որ ԱՀԿ անդամակցությունը հնարավորություն է տվել օգտվելու ԱՀԿ համաձայնագրերով ամրագրված «տարանցիկ փոխադրման ազատության» դրույթից, որը խիստ կարևոր է հարեան ԱՀԿ անդամ երկրներով ՀՀ տարածք բեռների անարգել փոխադրման համար, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը չունի ելք դեպի ծով, և բեռնափոխադրումների մեծ մասն իրականացվում է մեկ երկրի՝ Վրաստանի տարածքով:

Ի լրումն նշենք, որ ԱՀԿ-ին ՀՀ անդամակցությունը հիմք հանդիսացավ 2004թ. նոյեմբերին ԱՄՆ սենատի կողմից Ջեքսոն-Վենիկի ակտով (Jackson-Venik Act) Հայաստանի նկատմամբ կիրառվող խորական սահմանափակումների վերացմանը և Քաղմակողմ առևտորի և տեխնիկական ուղղումների ակտի ընդունմանը, որով Հայաստանին շնորհվեց Մշտական նորմալ առևտրային հարաբերությունների (Permanent normal trade relations) կարգավիճակ:

Անհրաժեշտ է դիտարկել նաև ԱՀԿ անդամակցության ազդեցությունը Հայաստանի միջազգային վրա: ՀՀ առևտրատնտեսական դաշտը կարգավորող օրենսդրությունը ԱՀԿ նորմերին համապատասխանեցման հիմքի վրա իրականացվող հետևողական տնտեսության ազատականացման քաղաքականությունը, ԱՀԿ անդամակցության շնորհիվ կայուն և կանխատեսելի գործարար միջավայրի ապահովումն իրենց էական ազդեցությունները ունեցան մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող վարկանիշային գնահատումներում ՀՀ –ի դիրքերի ամրապնդման վրա: Մասնավորապես.

- «The Fitch Ratings Sovereigns Group»²-ի 2008թ. իրականացված հետազոտության արդյունքում Հայաստանը ավելի քան 100 երկրների շարքում ստացել է BB «կայուն» վարկանիշային գնահատականը, որը վերաբերում է երկրում հիմնական տնտեսական ցուցանիշների դիմամիկային և քաղաքական զարգացումներին, ինչն օգնում է օտարերկրյա ներդրողներին գնահատել ռիսկերը: Կայուն աճը և համակարգված մակրոտնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև կոնկրետ քայլերի իրականացումը կառավարության բարեփոխումների նոր ծրագրի ներքո, կարող է շարունակական դրական ազդեցություն բռնել Հայաստանի վարկանիշի վրա երկարաժամկետ կտրվածքով: Համեմատության կարգով կարելի է նշել, որ Հայաստանը 2007թ. արդյունքներով ստացել էր BB- «դրական» վարկանիշը:

¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2002-2008թթ. տարեգրքեր:
² www.fitchratings.com

- Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Doing Business 2007»¹ զեկույցի համաձայն՝ Հայաստանը զբաղեցրել է 34-րդ տեղը, առաջ անցնելով ԱՊՀ և հարևան բոլոր երկրներից:
- Սկսած 1995թ.² «Ուղղ Սթրիթ Չորնը»³-ը և Հերիթիջ հիմնադրամը իրականացնում են ամենամյա խորը քննություն այն գործուների, որոնք առավել ուղղակի ազդեցություն են ունենում տնտեսական ազատության և բարգավաճման գործում (Տնտեսական ազատության ցուցանիշ): Ըստ համարկական ազատությունը պարզելու համար վերլուծության են ենթարկվել հետևյալ գործուները. առևտուր, հարկային բեռ, պետության միջամտությունը տնտեսության մեջ, դրամային քաղաքականություն, ստվերային շուկա, բանկային գործունեություն և ֆինանսներ, օտարերկրյա ներդրումներ, կարգավորում և այլն (այսուսկ 1): Ուսումնասիրության մեջ Հայաստանը դասակարգված է որպես «մեծամաս-սամբազություն» երկիր: Դիտարկման համաձայն՝ տնտեսության մեջ կառավարության միջամտությունը կարող է բնութագրվել որպես կայուն (չափավոր մակարդակ): Առևտուրային քաղաքականությունը գնահատված է կայուն (շատ քույլ պաշտպանություն). ներմուծվող ապրանքները հիմնականում ազատ են քանակական, լիցենզավորման կամ այլ պահանջներից: Կապիտալի հոսքը և օտարերկրյա ներդրումները նկարագրված են որպես կայուն (փոքր արգելվելու): Հայաստանը տրամադրում է պետական հավասար վերաբերմունք օտարերկրյա ներդրողների նկատմամբ, ովքեր տնտեսության ոլորտների մեջ մասում ունեն բիզնես հիմնելու միևնույն իրավունքները, ինչ որ Հայաստանի քաղաքացիները: Մասնավորեցումն ընթացքի մեջ է և բաց է օտարերկրացիների համար: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի՝ Հայաստանը շունի սահմանափակումներ կամ վերահսկումներ արտաքույրային հաշիվների, բանկային գործարքների, ընթացիկ փոխանցումների, շահույթի հայրենադարձման կամ մշտաբնակ կամ ոչ մշտաբնակ անձանց կողմից կատարվող արտաքին և ներքին ուղղակի ներդրումների նկատմամբ:

Հայաստանը տնտեսական ազատության ցուցանիշով 2008թ. զբաղեցրել է 28-րդ տեղը 162 երկրների շարքում: Համեմատության համար կարելի է նշել, որ 2003թ. Հայաստանը զբաղեցրել է 44-րդ տեղը:

Ինչպես տեսնում ենք, ԱՀԿ-ին անդամակցելը բազմաթիվ դրական հետևանքներ ունեցավ Հայաստանի տնտեսության վրա, սակայն համոզված ենք, որ դեռ ԱՀԿ մեխանիզմներն իրենց ամրողություն չեն սպառել, և ԱՀԿ-ով սահմանված մի շարք կանոնների հետևողական իրագործումը Հայաստանում կարող է ել ավելի բարձրացնել ՀՀ տնտեսության արդյունավետությունը, ինչն իր հերթին դրականորեն կանդրադառնա ՀՆԱ աճի, ապրանքների և ծառայությունների արտաքին առևտուրի, ինչպես նաև ներդրումային միջավայրի ձևավորման վրա: Դիտարկենք այդ հնարավորությունն ընձեռող տարրերակներից մի քանիսը:

Այսպես, երկարուղային փոխադրումների համակարգման մասին համաձայնագրի հիման վրա Վրաստանն Աղբեջանի հետ բանակցությունների ժամանակ վերջինիս տրամադրել է 50% արտոնություն՝ Վրաստանի տարածքով աղբեջանական ապրանքներ փոխադրելու համար, մինդեռ Հայաստանին այդ արտոնությունը կազմում է 24%՝ նավթամթերքի, և 17%՝ մնացած ապրանքների փոխադրման համար (որը միջնում կազմում է 20.5%):⁴ Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանն ու Վրաստանը ԱՀԿ անդամներ են, իսկ Աղբեջանը՝ ոչ, կարելի է միանշանակորեն պնդել, որ վրացական կողմը խախտում է ԱՀԿ հիմնարար կանոններից մեկը՝ «ազգերի առավել բարենպահատության» մոտեցումը՝ տրամադրելով ոչ ԱՀԿ անդամ պետությանն ավելի արտոնյալ ռեժիմ, քան ԱՀԿ անդամ գործընկերոջը: Ուստի, ԱՀԿ շրջանակներում

¹ www.doingbusiness.org

² www.heritage.org

³ www.railway.ge

վրացական այս ոեժիմի բողոքարկումը կիանգեցնի նրան, որ Վրաստանի տարածքով հայ արտահանողների և ներմուծողների տրամադրութային ծախսերը կարող են կրճատվել ընդհույպ մինչև 20%: Նշենք նաև, որ Վրաստանի կողմից սահմանված այս ոեժիմը պահպանվում է արդեն իսկ մի քանի տարի, ինչը նշանակում է, որ ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններն այդքան էլ ուշադիր չեն գործընկեր երկրներում տեղի ունեցող օրենսդրական և տնտեսական զարգացումներին, ինչը ևս մտահոգության տեղիք է տալիս: Բացի դրանից, ՀՀ կողմից վրացական այս ոեժիմի չբողոքարկելը կարող է պայմանավորված լինել նրանով, որ համաձայն բազմաթիվ միջազգային փորձագետների¹: ԱՀԿ վեճերի կարգավորման մեխանիզմը բավականին դանդաղաշարժ ու ժամանակատար է, ինչը թույլ չի տալիս ԱՀԿ անդամներին արագորեն արձագանքել ծագած խնդիրներին: ԱՀԿ վեճերի կարգավորման մեխանիզմին որպես այլընտրանքային տարրերակ կարող է լինել Հայաստանի երկողմ առևտրային համաձայնագրերում ներառել վեճերի կարգավորման առանձին մեխանիզմի վերաբերյալ դրույթներ, որոնք շատ ավելի քիչ ժամանակ են պահանջում վերջնական որոշում ընդունելու և վեճը լուծելու համար: Նշված տարրերակը լայնորեն կիրառվում է Եվրամիության կողմից, որը, վերահաստատելով ԱՀԿ կանոնները իր կողմից կնքված երկողմ առևտրային համաձայնագրերում, հետազայում հնարավորություն կունենա բողոքարկել գործընկեր պետության որոշումները թե՝ ԱՀԿ-ով և թե՝ համաձայնագրով նախատեսված վեճերի կարգավորման մեխանիզմով:

Ունենալով բավականին փոքր ներքին շուկա՝ Հայաստանի համար խիստ կարևոր է դառնում արտահանման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, ինչը լրջագույն խնդիր է դարձել հատկապես վերջին տարիներին՝ դրամի կտրուկ արժեքում պայմաններում: Եվ, քանի որ ԱՀԿ-ն արգելում է տնտեսական լծակների կիրառումը (ինչպիսիք են, օրինակ, լրավճարները)՝ արտահանման խթանման համար, ուստի անհրաժեշտ է շեշտը դնել այնպիսի միջոցառումների վրա, որոնք կարող են նվազեցնել հայ արտահանողների գործարքային ծախսերը, կրճատել նրանց ոիսկերը և ապահովել նրանց բարձր որակի խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ: Այս առումով կարևոր ենք համարում հետևյալ ուղղություններով բարեփոխումների իրականացումը.

- ՀՀ առևտրական ներկայացուցիչների և ներկայացուցչությունների աշխատանքների բարեխավում,
- այն ապրանքախմբերի մասով, որոնք ունեն արտահանման ներուժ, մի շաբթ միջազգային համաձայնագրերին միացում,
- այլ միջոցառումներ (օրինակ՝ բիզնեսին աջակցող կառույցների աշխատանքների կատարելագործում):

Անդրադանանք վերոնշյալ կետերից մի քանիսին:

2004թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ կառավարության որոշմամբ² հաստատվեց ՀՀ առևտրական ներկայացուցիչների և առևտրական ներկայացուցչությունների կանոնադրությունը, ինչպես նաև 2005թ. փետրվարի 17-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցիչ կանոնադրությունը³:

Համաձայն նշված փաստաթղթերի՝ առևտրական ներկայացուցիչների և ներկայացուցչությունների գործառույթների շարքին են պատկանում.

¹ Thomas A. Zimmermann, Swiss Institute for International Economics and Applied Economic Research, University of St. Gallen, Switzerland: "WTO and Dispute Resolution", 2007.

² Gregory Shaffer, Victor Mosoti, Asif Qureshi, International Centre for Trade and Sustainable Development, "Towards a Development-Supportive Dispute Settlement System in the WTO", March 2003.

³ 2004թ. դեկտեմբերի 23-ի «ՀՀ առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1935-Ն որոշում:

³ 2005թ. փետրվարի 17-ի «Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցիչ կանոնադրությունների կողմանը մասին» ՀՀ կառավարության թիվ 173-Ն որոշում:

- դեսպանընկալ պետության տնտեսության, առևտրատնտեսական բնագավառը կանոնակարգող իրավական դաշտի, ինչպես նաև արտաքին առևտրի, ներքին և արտաքին շուկաների մասին տեղեկատվություն հավաքելը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն ու այլ պետական մարմիններին տրամադրելը,
- դեսպանընկալ պետության պետական կառավարման մարմիններին, շահագրգիռ անձանց և կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության տնտեսության, առևտրատնտեսական բնագավառը կանոնակարգող իրավական դաշտի, ինչպես նաև արտաքին առևտրի, ներքին և արտաքին շուկաների մասին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը,
- Հայաստանի առևտրարդյունաբերական պալատի, Զարգացման հայկական գործակալության և այլ պետական մարմինների՝ դեսպանընկալ պետությունում (պետություններում) գործող ներկայացուցչությունների (ներկայացուցիչների) գործունեության համակարգումն ու աջակցության ապահովումը,
- Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տվյալ երկրի կազմակերպություններից ներուժ ներդրողներ որոնելը,
- Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության տնտեսավարող սուբյեկտների միջև առևտրատնտեսական գործարքների նախապատրաստմանն ու իրականացմանն աջակցելը, ինչպես նաև ճեռք բերված պայմանագրվածությունների կատարմանը նպաստելը,
- և այլն:

Ներկայումս Հայաստանը առևտրական ներկայացուցիչներ ունի Ռուսաստանում, Եվրամիությունում, ինչպես նաև Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցիչ: Նախապատրաստվում է նաև առևտրական ներկայացուցիչ նշանակել ԱՄՆում: Այնուամենայնիվ, պետք է նշել մի շարք խնդիրներ՝ կապված առևտրական ներկայացուցիչների գործունեության հետ: Մասնավորապես, չնայած կանոնադրությամբ ամրագրված իրենց գործառույթների, մինչ օրս չի պատրաստվել հասարակության համար մատչելի ոչ մի հաշվետվություն՝ կապված օտարերկրյա պետություններում տեղ գտած զարգացումների հետ: Ուստի, կարծում ենք, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել համապատասխան համակարգ, որի շրջանակներում ՀՀ առևտրական ներկայացուցիչներն ու ներկայացուցչությունները ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կներկայացնեն պարբերական (եռամսյակային, կիսամյակային, տարեկան) հաշվետվություններ՝ արտաքին շուկաների, արտասահմանյան երկրների օրենսդրության և այլ ոլորտներում տեղի ունեցած նորագույն զարգացումների վերաբերյալ: Այդ հաշվետվությունները պետք է նաև մատչելի դարձնել գործարար համայնքի համար՝ տեղադրվելով նախարարության կայրում և տեղեկացնելով դրա մասին գործարարներին և վերջիններիս աջակացող կառույցներին: Բացի դրանից, նշենք, որ քեզես Հայաստանը արդեն իսկ նշանակել է առևտրական ներկայացուցիչներ ՀՀ ամենամեծ առևտրային գործընկեր երկրներում՝ Ռուսաստանում և Եվրամիությունում, այնուամենայնիվ ակնհայտ է, որ մեկ հոգին բավարար չէ վերոնշյալ աշխատանքներն արդյունավետորեն իրականացնելու համար: Ուստի, առաջարկվում է նաև Եվրամիությունում և Ռուսաստանում ստեղծել առևտրական ներկայացուցչություններ՝ բավարար հաստիքներով՝ այդ երկրներում զարգացումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման, վերլուծության, հաշվետվությունների պատրաստման և դրանք ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացնելու համար:

Անդրադաստիճանությունը միջազգային համաձայնագրերի և կոմվենցիաների վերաբերյալ կատարված առաջարկությանը, հարկ է նշել, որ դրանք կարևորագույն դեր են խաղում միջազդական առևտրի ազատականացման գործում: Ի տարրերություն առևտրի բազմակողմ համակարգի՝ ԱՀԿ-ի, որը բավականին ծանրաքարշ մեխանիզմ է, քանի որ ընդգրկում է ողջ ապրանքային

առևտուր և ներառում է բազմաթիվ երկրներ, որոնք պետք է համաձայնության գան որևէ որոշում կայացնելիս, երկրողմ համաձայնագրերը կամ ճյուղային կոնվենցիաները ավելի արդյունավետ են կարճաժամկետ և միջինժամկետ կտրվածքում, քանի որ դրանց կիրարկումը անդամ պետությունների կողմից չի պահանջում հսկայածավալ ռեսուրսներ և ժամանակ։ Ուստի, ԱՀԿ-ն և նշված համաձայնագրերն ու կոնվենցիաները հանդիսանում են փոխլրացնող միջոցներ՝ ուղղված միջազգային առևտուրի ազատականացմանը։

Երկրողմ համաձայնագրերը և կոնվենցիաներն ունեն իրենց առանձնահատկությունները։ Մասնավորապես, Մարտերի և առևտուրի գլխավոր համաձայնագրի 24-րդ հոդվածով սահմանվում է բացառություն ազգերի առավել բարենպաստության սկզբունքից, որի համաձայն եթե ստեղծվում է ազատ առևտուրի գոտի կամ մաքսային միություն, ապա այդ միավորման սահմաններում մաքսատուրքերը և առևտուրային այլ խոչընդոտները պետք է նվազեցվեն կամ ընդհանրապես վերացվեն առևտուրի հիմնականում բոլոր հատվածներում¹։ Սա նշանակում է, որ մաքսային արտոնություններ չեն կարող սահմանվել ճյուղային համաձայնագրերով, որոնք սովորաբար վերաբերում են միայն մի քանի ապրանքախմբերին։ Ուստի, վերոնշյալ կոնվենցիաների կարգավորման շրջանակը բոլորովին այլ է. դրանց միջոցով անդամ պետությունները ծգություն են վերացնել տեխնիկական խոչընդոտները, այլ ոչ թե մաքսատուրքերն ու նման այլ վճարները։ Հաջուկ առնելով այն հանգամանքը, որ, որոշ գնահատականների համաձայն, առևտուրի ընթացակարգերի վրա կատարվող ծախսերը կազմում են առևտուրի ընդհանուր արժեքի մոտավորապես 4-5%-ը (որը գրեթե նույնն է, ինչ արդյունաբերական ապրանքների առևտուրի ընթացիկ միջին մաքսադրույքը՝ 3.8%),² վստահորեն կարող ենք պնդել, որ ճյուղային կոնվենցիաների միջոցով տեխնիկական խոչընդոտների վերացումը ոչ պակաս շահավետ է, քան մաքսատուրքերի վերացումը։

Այսպես, միջազգային փաստաթղթերի այս երկու տեսակով կարելի է զգալիորեն բարձրացնել հայ արտահանողների արդյունավետությունը և հայկական ապրանքների գրավչությունը միջազգային շուկաներում։ Մասնավորապես, պետք է նշել, որ Հայաստանն արդեն իսկ ունի ազատ առևտուրի համաձայնագիր Ռուսաստանի և ԱՊՀ անդամ մի շարք այլ երկրների հետ, սակայն դեռ չկա Եվրամիության հետ ազատ առևտուրի համաձայնագիր։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եվրամիությունը ներկայումս համարվում է առևտուրի ոլորտում Հայաստանի խոշորագույն գործընկերը, կարծում ենք, որ անհրաժեշտ է բանակցություններ սկսել Եվրամիության հետ ազատ առևտուրի համաձայնագրի կնքման ուղղությամբ։ Ի լրումն, պետք է անդամակցել նաև այն ճյուղային կոնվենցիաներին, որոնց կողմից կարգավորվող ապրանքախմբերում Հայաստանն ունի արտահանման մեծ ներուժ։ Նման կոնվենցիայի շարքին կարող է դասել «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վերահսկողության և հարգադրոշման մասին» կոնվենցիան, անդամակցությունը որին հնարավորություն կտա ուկերչական ապրանքներ արտադրողներին անարգել արտահանել իրենց արտադրանքը դեպի եվրոպական բազմաթիվ երկրներ։ Սա հատկապես կարևոր է փոքր և միջին արտադրողների համար, որոնց համար բազմաթիվ ընթացակարգերն ու ավելորդ թղթաբանությունը առավել մեծ խոչընդոտ են ներկայացնում։

¹ Մարտերի և առևտուրի գլխավոր համաձայնագիր (ՄԱԳՀ-1947թ.), Հոդված XIV, «Առևտուրի բազմակողմ բանակցությունների Ուղուացական փուլի արդյունքները, իրավական տերսություն», AEPLAC, 2002թ.։

² Swedish Trade Procedures Council (SWEPRO), “Trade Facilitation – Impact and Potential Gains”, August 2002